# ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ
# ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
# N <<ԵՔ-ԲՄԱՇՁԲ-22/31>>

ք. Երևան «24» մարտի 2022 թ.

Երևանի քաղաքապետարանը, ի դեմս աշխատակազմի գնումների վարչության պետի ժ/պ Գ. Մուրադյանի, որը գործում է Երևանի քաղաքապետի 14.11.2018 թվականի թիվ 3407-Ա որոշման հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և <<ԼԻԼԱՆԱՐՄ>> ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Հ. Օհանյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին

## 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված **Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի բակային տարածքների ընթացիկ նորոգման աշխատանքների** (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, աշխատանքի նախագծին, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝ Համաձայն հավելված 2-ի ::

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

## 2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

## 3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

### 3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով.

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

**3.2. Պատվիրատուն պարտավոր է՝**

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում,ծավալով և կարգով.

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

**3.3. Կապալառուն իրավունք ունի՝**

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

**3.4. Կապալառուն պարտավոր է՝**

3.4.1 Աշխատանքները կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին,կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան,կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման (էլեկտրական, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխիչ և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.9 Պայմանագրով երաշխիքային ժամկետ է սահմանվում Պատվիրատուի կողմից ողջ ծավալով Աշխատանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից **հաշված 365 օրացուցային** օր: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված Աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.11 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրամասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

## 4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կապալառուն հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

4.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 20 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

4.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահման-ված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված հանձնաժողով ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար.

2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ

[28] *Սույն կետը հանվում է պայմանագրի նախագծից, եթե կիրառելի չէ:*

սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում.

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ.

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում.

5) մինչև սույն կետով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարաժամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

## 5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում **է 14705000 (տասնչորս միլիոն յոթ հարյուր հինգ հազար) ՀՀ դրամ, որից 2450833 (երկու միլիոն չորս հարյուր հիսուն հազար ութ հարյուր երեսուներեք)** ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը,

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն համապատախան ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում սույն 5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 3) նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:

## 6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

66.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի **0,1 (զրո ամբողջ մեկ տասնորդական)** տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի **1 (մեկ)** տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքի արդյունքը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

## 7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը` այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2 Պայմանագրից ծագած` կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած` հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ` համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը` Կապալառուի առաջարկության առկայության դեպքում` պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կապալառուի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կապալառուի էլեկտրոնային փոստին:

8.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Սույն պայմանագիրը կազմված է ____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.13 Սույն պայմանագրով նախատեսված Պատվիրատուի իրավունքներն ու պարտականությունները իրականացնում **Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմը:**

## 9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

| | |
|---|---|
| **Պատվիրատու** | **Կապալառու** |
| Երևանի քաղաքապետարան | «ԼԻԼԱՆԱՐՄ» ՍՊԸ |
| ք.Երևան 0015, Արգիշտիի փ. 1 | Ք.Երևան, Նուբարաշեն 12փ. 4շ., բն 6 |
| Կենտրոնական գանձապետարան | ԱԿԲԱ ԲԱՆԿ ԲԲԸ |
| Հ/Հ 900022750500 | Հ/Հ 220613330251000 |
| ՀՎՀՀ 02593108 | ՀՎՀՀ 00433589 |
| Գ.Մուրադյան ---------------------------- (ստորագրություն) | Հ.Օհանյան ---------------------------- (ստորագրություն) |

Հավելված թիվ 1
«24» մարտի 2022 թ. կնքված
կնքված աշխատանքների կատարման
թիվ << ԵՔ-ԲՄԱԾՁԲ-22/31>> գնման պայմանագրի

## Ծավալաթերթ-Նախահաշիվ

Շենգավիթ վարչական շրջանի տարածքում բակային տարածքների պահպանման, վերանորոգման, վերականգնման և վնասված գույքի փոխարինման աշխատանքների

| NN | Աշխատանքների անվանումը | Չափման միավորը | Ծավալը | 1 միավորի առավելագույն արժեքը /հազ. դր./ | |
|---|---|---|---|---|---|
| 1 | 3 | 4 | 5 | 6 | 7 |
| 1 | Տարածքի մաքրում, եզրաքարերի քանդում, մետաղական ցանկապատի և հենասյուների ապամոնտաժում, զրուցատաղավարի, նստարանի և խաղերի ապամոնտաժում աղբի հավաքում, բարձում ինքնաթափ մեքենայի վրա և տեղափոխում, | տ | | 1.20 | |
| 2 | Նույնի տեղափոխում 13կմ | տ | | 2.60 | |
| 3 | Ասֆալտբետոնե ծածկույթի, բետոնե շերտի, հարթակի, աստիճաններ քանդում /ներառյալ հարթեցնող շերտը/ հարթակի ապամոնտաժում, | մ$^3$ | | 2.30 | |
| 4 | Շին աղբի հավաքում և տեղափուխում 13կմ | տ | | 3.10 | |
| 5 | Զրուցատաղավարների վնասված տարրերի (մետաղական և փայտե) փոխարինում, վերանորոգում, ներկում, լաքապատում | հատ | | 20.00 | |
| 6 | Նստարանների վնասված տարրերի (մետաղական և փայտե) փոխարինում, վերանորոգում, ներկում, լաքապատում | հատ | | 4.00 | |
| 7 | Աղբամանների վնասված տարրերի (մետաղական և փայտե) փոխարինում, վերանորոգում, ներկում, լաքապատում | հատ | | 1.00 | |
| 8 | Մանկական խաղերի վնասված տարրերի (մետաղական, առանցքակալ, լիսեռ, շղթա և փայտե) փոխարինում, վերանորոգում, ներկում, լաքապատում | հատ | | 5.00 | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 9 | Մանկական խաղերի վտանգ ներկայացնող տարրերի ապամոնտաժում | հատ | | 5.00 | | |
| 10 | Հայտարարության տախտակների վնասված տարրերի ամրացում, վերանորոգում, ներկում | հատ | | 2.00 | | |
| 11 | Ցայտաղբյուրների վնասված դետալների փոխարինում, վերանորոգում | հատ | | 5.00 | | |
| 12 | Ջրուցատաղավարների տեղադրում և ամրացում | հատ | | 5.00 | | |
| 13 | Նստարանների տեղադրում և ամրացում /տրամադրվող/ | հատ | | 1.00 | | |
| 14 | Աղբամանների տեղադրում և ամրացում /տրամադրվող/ | հատ | | 0.50 | | |
| 15 | Վնասված նստարանների փոխարինում նորով | հատ | | 50.00 | | |
| 16 | Վնասված աղբամանների փոխարինում նորով | հատ | | 18.00 | | |
| 17 | Մանկական խաղերի տեղադրում և ամրացում | հատ | | 5.00 | | |
| 18 | Ցայտաղբյուրի փոխարինում նորով, տեղադրում և ամրացում | հատ | | 60.00 | | |
| 19 | Մետաղական բազրիքի փոխարինում նորով պատրաստում, լավորակ ներկում և տեղադրում h=0.9մ | գմ | | 7.50 | | |
| 20 | 4մ բարձրությամբ մետաղական ցանկապատի փոխարինում նորով պատրաստում, լավորակ ներկում և տեղադրում սյուներով | գմ | | 27.50 | | |
| 21 | 3.5մ բարձրությամբ 108x5,0 մետաղականն հենասյուների փոխարինում նորով տեղադրրում բետոնե հիմքով ններկում հակակկոռոզիոն ներկով 2 շերտ | հատ | | 23.50 | | |
| 22 | 3.5մ բարձրությամբ 89x4,0 մետաղականն հենասյուների փոխարինում նորով տեղադրրում բետոնե հիմքով ններկում հակակկոռոզիոն ներկով 2 շերտ | հատ | | 21.40 | | |
| 23 | Պատի վերակառուցում տուֆի կանոնավոր ձևի քարերի շարվածքով 20սմ հաստությամբ, ցեմենտ ավազե շաղախով | մ3 | | 10.00 | | |
| 24 | Պատի վերակառուցում պեմզաբլոկի քարերի շարվածքով 20սմ հաստությամբ, ցեմենտ ավազե շաղախով | մ3 | | 9.50 | | |
| 25 | Պատի սվաղում վերականգնում ցեմենտային շաղախով | $մ^2$ | | 1.90 | | |
| 26 | Պատի նկարազարդում | $մ^2$ | | 1.00 | | |
| 27 | Բուսահողի բարձում ա/ինքնաթափերի վրա | $մ^3$ | | 2.50 | | |
| 28 | Բուսահողի տեղափոխում 35 կմ-ից | տն | | 6.10 | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 29 | Բուսահողի լրացում, փռում ձեռքով | մ$^2$ | | 0.40 | |
| 30 | Սիզամարգերի վերականգնում, տեղադրում | մ$^2$ | | 0.20 | |
| 31 | Ճիմապատում վերականգնում, | մ$^2$ | | 1.00 | |
| 32 | Արհեստական խոտածածկույթի իրականացում, կանաչ գորգածածկույթ 2,5սմ հաստությամբ, սոսնձով | մ$^2$ | | 5.20 | |
| 33 | Ռետինե հատակի պատրաստում 30մմ հաստության ինքնահարթեցնող շերտի վրա /գնի մեջ ներառված է ինքնահարթեցնող շերտի իրականացման, ռետինե հատակի և տեղադրման արժեքները/ | մ$^2$ | | 22.00 | |
| 34 | Ռետիտե ծածկույթով դաշտը նախատեսված է մանկական խաղահրապարակների համար САНпин նորմերին համապատասխան: Ռետինե ծածկույթի ընդհանուր չափսերը՝ ըստ պահանջի: Ռետինե ծածկի հաստությունը ՝ 8-10 մմ, ռետինե փշրանքը տարբեր չափսերի ՝ 1-5 մմ:Էկոլոգիապես մաքուր սերտեֆիկացված:Առանց կարի : Ռետինե գունավորման խառնուրդը ըստ պատվիրատուի ընտրության:Համատեղելի է կիսառետինային երկկեմպոնենտային սոսնձի հետ : Չի գունաթափվում արևի ճառագայթների , խոնավության և ցրտի ազդեցությունից: Ռուսական արտադրության կամ համարժեք: Տեղադրման և մոնտաժման աշխատանքները ներառյալ: | մ$^2$ | | 10.00 | |
| 35 | Խաղահրապարակում ռեզինե հատակի իրականացում 1000*1000մմ սալերով Устройство резинового покрытия игровой площадки | մ$^2$ | | 13.00 | |
| 36 | Արևային էներգիայով սնվող արտաքին Լուսադիոդային լուսարձակների /ԼԵԴ/ տեղադրում 90վտ հզորությամբ, ֆոտովոլտային վահանակով | հատ | | 33.00 | |
| 37 | Ֆուտբոլի դաշտի փայտյա մասի փոխարինում, ներկում կամ լաքապատում | մ$^3$ | | 160.00 | |
| 38 | Ֆուտբոլի դարպասի տեղադրում | հատ | | 20.00 | |
| 39 | Բասկետբոլի վահաններՉ տեղադրում | հատ | | 18.00 | |
| 40 | Մետաղական մասերի յուղաներկում 2 շերտ | մ$^2$ | | 1.10 | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | |
| 41 | Փայտյա մասերի յուղաներկում 2 շերտ | մ$^2$ | | 1.00 | | |
| 42 | Փայտյա մասերի լաքապատում 2 շերտ | մ$^2$ | | 1.00 | | |
| 43 | Պլաստմասե խողովակների տեղադրում Ф50մմ, փորձարկումով | գմ | | 1.00 | | |
| 44 | Պլաստմասե խողովակների տեղադրում Ф25մմ, փորձարկումով | գմ | | 0.70 | | |
| 45 | Պողպատե խողովակաշարի կառուցում եռակցումով Æ 57մմ, փորձարկումով | գմ | | 2.00 | | |
| 46 | Խողովակաշարի անցացում պողպատե եռակցումով Æ 25մմ, փորձարկումով | գմ | | 0.60 | | |
| 47 | Ծնցուղների տեղադրում | հատ | | 1.20 | | |
| 48 | Փական և տեղադրում Ф25մմ | հատ | | 2.00 | | |
| 49 | Փական և տեղադրում Ф50մմ | հատ | | 3.00 | | |
| 50 | Խճի շերտի պատրաստում 5սմ հաստությամբ /բետ սալիկների տակ/ | մ$^3$ | | 7.00 | | |
| 51 | Բազալտե եզրաքարերի տեղադրում բետոնե հիմքով 150x300մմ/ կատարել անհրաժեշտ քանդման աշխատանքները, այդ թվում ասֆալտաբետոնե ծածկույթի, հողի և հին եզրաքարերի քանդում բետոնահիմքով/ | գմ | | 10.23 | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 52 | Բետոնե եզրաքարերի տեղադրում բետոնե հիմքով 150x300մմ կատարել անհրաժեշտ քանդման աշխատանքները, այդ թվում ասֆալտաբետոնե ծածկույթի, հողի և հին եզրաքարերի քանդում բետոնահիմքով/ | գմ | | 6.30 | |
| 53 | Բետոնե եզրաքարերի տեղադրում բետոնե հիմքով 80x200մմ կատարել անհրաժեշտ քանդման աշխատանքները, այդ թվում ասֆալտաբետոնե ծածկույթի, հողի և հին եզրաքարերի քանդում բետոնահիմքով/ | գմ | | 5.40 | |
| 54 | Նոր բազալտե եզրաքարերի տեղադրում B15 բետոնե հիմքով և շաղախով 80x300մմ /կատարել անհրաժեշտ քանդման աշխատանքները, այդ թվում ասֆալտաբետոնե ծածկույթի, հողի և հին եզրաքարերի քանդում բետոնահիմքով/ | գմ | | 5.00 | |
| 55 | Ց/ավազե չոր խառնուրդի պատրաստում բետոնե սալիկների տակ 5սմ հաստությամբ | $մ^3$ | | 8.00 | |
| 56 | Բետոնե զեղարվեստական գունավոր սալիկներից, նաև ռետրո, տեղադրում հատակի պատրաստում 50մմ հաստությամբ | $մ^2$ | | 4.50 | |
| 67 | Հատակների երեսպատում 30մմ հաստությամբ բազալտե սալերով և շաղախով | $մ^2$ | | 11.00 | |
| 58 | Ամրանային ցանցի տեղադրում ամրան-D10մմ A500c | տն | | 122.00 | |
| 59 | Բետոնե նախապատրաստական շերտ h=80մմ B7.5 դասի բետոնով | $մ^3$ | | 25.00 | |
| 60 | Երկաթ բետոնե հիմքի իրականացում B15 դասի բետոնով | $մ^3$ | | 30.00 | |
| 61 | 50մմ հաստությամբ ց/ավազե հարթեցնող շերտ | $մ^2$ | | 1.90 | |
| 62 | Ցեմենտավազային շերտի իրականացում h=20մմ | $մ^2$ | | 1.00 | |
| 63 | Ջրուցատաղավարի տանիքի վերանորոգում | քմ | | 6.00 | |
| 64 | Ջրուցատաղավարի կախովի առաստաղի կառուցում | քմ | | 5.00 | |
| 65 | **Չնախատեսված այլ աշխատանքներ** | | | | |
| | Ընդամենը | | | 846.333 | |
| | ԱԱՀ 20% | | | 169.267 | |
| | Ընդամենը | | | 1015.600 | |

Պատվիրատուն կարող է պահանջել վերը նշված բոլոր աշխատանքների իրականացում մինչև 14.705 մլն դրամի չափով

**Տ ե խ ն ի կ ա կ ա ն  ա ռ ա ջ ա դ ր ա ն ք**

Պետք է իրականացվեն Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի տարածքում բակային տարածքների պահպանման, վերանորոգման, վերականգնման և վնասված գույքի փոխարինման աշխատանքներ: Անհրաժեշտ է կատարել նախահաշիվ ծավալաթերթով նախատեսված աշխատանքներն ու միջոցառումները, ինչպես նաև չնախատեսված այլ աշխատանքներ:

Պատվիրատուն կարող է պահանջել վերը նշված բոլոր աշխատանքների իրականացում 14.705 մլն դրամի չափով:
Հայտերի գնահատումը ըստ միավորի առավելագույն գինը սյունյակի հանրագումարի նշված նախահաշիվ ծավալաթերթում
Աշխատանքներն իրականացնելուց առաջ անհրաժեշտ է տեղում կատարել ուսումնասիրություն:
Օգտագործվող բոլոր նյութերը և սարքավորումները պետք է համապատասխանեն ՀՀ-ում գործող նորմատիվային պահանջներին, ինչպես նաև

ապրանքների որակավորման և պարամետրային ցուցանիշներին:
Բոլոր տիպի աշխատանքները պետք է կատարվեն ապահովելով շին. նորմերը, կանոնները, ստանդարտներն ու տեխ. պայմանները:
Ապահովել շինարարության ժամանակ օգտագործվող շինարարական նյութերի որակը հաստատող փաստաթղթերի /սերտեֆիկատներ, տոխնիկական անձնագիր, լաբորատոր ստուգման և փորձարկման մասին հաշվետվություններ և այլն/ համապատասխանելիությունը գործող ստանդարտներին, տեխնիկական ու այլ նորմատիվային պահանջներին:
Անվտանգության պատասխանատվությունը կրում է կապալառուն:
Աշխատանքների ավարտից հետո Կապալառու կազմակերպությունը կրում է **1 տարվա երաշխիքային** պարտավորություն:
Նշված աշխատանքները պետք է իրականացվեն Շենգավիթ վարչական շրջանի ղեկավարի կողմից տրվող պատվեր առաջադրանքի հիման վրա:
Օգտագործվող բոլոր նյութերը, տեսակները, գույները և երանգները համաձայնեցնել վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի հետ:
Պահանջվող աշխատանքներին պետք է անմիջապես արձագանքել, անկախ օրից և ժամից, ինչպես նաև կատարել սեղմ ժամկետում:

**Պատվիրատու**
Երևանի քաղաքապետարան
ք.Երևան 0015, Արգիշտիի փ. 1
Կենտրոնական գանձապետարան
Հ/Հ 900022750500
ՀՎՀՀ 02593108

Գ.Մուրադյան ____________________
/ստորագրություն/

**Կապալառու**
«ԼԻԼԱՆԱՐՄ» ՍՊԸ
Ք.Երևան, Նուբարաշեն 12փ. 4շ., բն 6
ԱԿԲԱ ԲԱՆԿ ՓԲԸ
Հ/Հ 220613330251000
ՀՎՀՀ 00433589

Հ.Օհանյան ____________________
(ստորագրություն)

Հավելված թիվ 2
«24» մարտի 2022 թ. կնքված
կնքված աշխատանքների կատարման
թիվ << ԵՔ-ԲՄԱՇՁԲ-22/31>> գնման պայմանագրի

## ՕՐԱՑՈՒՅՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ

**«ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ» ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ**

| N ը/կ | Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումներ | Աշխատանքների կատարման ժամկետը ** | |
|---|---|---|---|
| | | Սկիզբը | Ավարտը |
| 1 | Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի բակային տարածքների ընթացիկ նորոգման աշխատանքներ | 2022թ.` պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են շինարարական աշխատանքների և տեխնիկական հսկողության ծառայությունների մատուցման պայմանագրերը (ֆինանսական միջոցների տրամադրման համաձայնագրերը) ուժի մեջ մտնելու օրը, | 20.12.2022 ներառյալ |
| **ԸՆԴԱՄԵՆԸ** | | | |

**Պատվիրատու**
Երևանի քաղաքապետարան
ք.Երևան 0015, Արգիշտիի փ. 1
Կենտրոնական գանձապետարան
Հ/Հ 900022750500
ՀՎՀՀ 02593108

Գ. Մուրադյան ----------------------------------
(ստորագրություն)

**Կապալառու**
«ԼԻԼԱՆԱՐՄ» ՍՊԸ
Ք.Երևան, Նուբարաշեն 12փ. 4շ.,բն 6
ԱԿԲԱ ԲԱՆԿ ԲԲԸ
Հ/Հ 220613330251000
ՀՎՀՀ 00433589

Հ. Օհանյան ----------------------------------
(ստորագրություն)

«24» մարտի 2022 թ. կնքված
կնքված աշխատանքների կատարման
թիվ << ԵՔ-ԲՄԱՇՁԲ-22/31>> գնման պայմանագրի

## ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Աշխատանքի | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2022թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում** | | | | | | | | | | | | |
| | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 10 | 45611300/707 | Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի բակային տարածքների ընթացիկ նորոգման աշխատանքներ ***աշխատանքներ*** | --- | -- | 1 470 500 | 4 411 500 | 4 411 500 | 4 411 500 | 7 352 500 | 7 352 500 | 7 352 500 | 14 705 000 | 14 705 000 | 14 705 000 | 14 705 000 |

*Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:*

**Պատվիրատու**
Երևանի քաղաքապետարան
ք.Երևան 0015, Արգիշտիի փ. 1
Կենտրոնական գանձապետարան
Հ/Հ 900022750500
ՀՎՀՀ 02593108

Գ.Մուրադյան ------------------------------
(ստորագրություն)

**Կապալառու**
«ԼԻԼԱՆԱՐՄ» ՍՊԸ
Ք.Երևան, Նուբարաշեն 12փ. 4շ., բն 6
ԱԿԲԱ ԲԱՆԿ ԲԲԸ
Հ/Հ 220613330251000
ՀՎՀՀ 00433589

Հ.Օհանյան ------------------------------
(ստորագրություն)

Հավելված թիվ 3
«24» մարտի 2022 թ. կնքված
կնքված աշխատանքների կատարման
թիվ << ԵՔ-ԲՄԱԾՁԲ-22/31>> գնման պայմանագրի

| Պայմանագրի կողմ | Պատվիրատու |
|---|---|
| ______________________________ | ______________________________ |
| ______________________________ | ______________________________ |
| գտնվելու վայրը ___________ __ | գտնվելու վայրը ________________ |
| հհ ________________________ | հհ _________________________ |
| հվհհ ______________________ | հվհհ _________________________ |

**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N**
**ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ**
**ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ**

*« » « » 20 թ.*

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

________________________________________________________________________________

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «__________________» 20 թ.
Պայմանագրի համարը՝ __________
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները՝

| N | Կատարված աշխատանքների | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | անվանումը | տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը | քանակական ցուցանիշը | | կատարման ժամկետը | | Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/ | Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/ |
| | | | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

| Աշխատանքը հանձնեց | Աշխատանքը ընդունեց |
|---|---|
| ______________________________ | ______________________________ |
| ստորագրություն | ստորագրություն |
| ______________________________ | ______________________________ |
| ազգանուն, անուն | ազգանուն, անուն |
| Կ.Տ. | Կ.Տ. |

Հավելված 3.1
«24» մարտի 2022 թ. կնքված
կնքված աշխատանքների կատարման
թիվ << ԵՔ-ԲՄԱԾՁԲ-22/31>> գնման պայմանագրի

ԱԿՏ N
պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ ____________-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և ________-ի
Պատվիրատուի անունը Կապալառուի անունը
(այսուհետ՝ Կապալառու) միջև 20 թ. ___________________________-ին կնքված N _______________
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կապալառուն 20 թ. __________-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված աշխատանքները.

| Աշխատանքի | | |
|---|---|---|
| անվանումը | չափման միավորը | քանակը (փաստացի) |
| | | |
| | | |

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

КОՂՄԵՐԸ

**Հանձնեց**

______________________
ազգանուն, անուն

______________________
ստորագրություն

**Ընդունեց**
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

______________________
ազգանուն, անուն

______________________
ստորագրություն

## ՏՈՒԺԱՆՔԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ
**(որակավորման ապահովում)**

ք.Երևան

«24» մարտի 2022թ.

«Լիլանարմ» ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Տնօրեն. Հ Օհանյանի-, անձնագիր AU0588103, տրված 19.01.2022թ. 067 կողմից, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա՝ (այսուհետև՝ Ընկերություն), սույնով միակողմանի սահմանում է հետևյալ տուժանքի վճարման համաձայնությունը.

### 1. Համաձայնության առարկան

1.1Ընկերությունը մասնակցում է Երևանի քաղաքապետարան* (այսուհետ՝ Պատվիրատու)կողմից կազմակերպված՝ԵՔ-ԲՄԱՇՁԲ-22/31* ծածկագրով գնման ընթացակարգին:

1.2 Որպես գնման ընթացակարգի արդյունքում ընտրված մասնակից, կնքվելիք պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար անհրաժեշտ որակավորման ապահովում, Ընկերությունը, Պատվիրատուին է ներկայացնում սույն տուժանքի համաձայնագիրը և կից վճարման պահանջագիրը՝ լրացված և հաստատված Ընկերության կողմից:

1.3 Ընկերությունը սույն տուժանքի համաձայնագրին կից ներկայացվող վճարման պահանջագրի (այսուհետ՝Պահանջագիր) ստորագրմամբ անհետկանչելի իրեն համաձայնվում է,որ՝

ա) Պահանջագրի ստորագրմամբ Ընկերությունը տալիս է իր հավաստումը Պահանջագրի «Վճարման պայմանները» դաշտում լրացված «ակցեպտավորված վճարման» համար, որի դեպքում նշված գումարի գանձման հետ կապված Ընկերությանը սպասարկող /վճարող/ Բանկը՝ /այսուհետ՝ Վճարող Բանկ/ ստացված Պահանջագիրը չի ներկայացնում Ընկերությանը լրացուցիչ համաձայնություն ստանալու համար, քանի որ Ընկերության կողմից Պահանջագրի վրա արդեն դրվել է ստորագրությունը՝ ակցեպտավորման նպատակով:

բ) Պահանջագիրը հիմք է հանդիսանում Վճարող Բանկի համար՝ Պահանջագրով նշված ամբողջ գումարը Ընկերության հաշվից գանձելու համար՝ առանց լրացուցիչ ակցեպտավորման:

գ) Ընկերությունը չի կարող գրավոր կամ այլ եղանակով Վճարող Բանկին կարգադրել Պահանջագրի վրա դրված իր ակցեպտը հետկանչելու մասին:

դ)Ընկերությունը հավաստում է,որ Պահանջագիրը ակցեպտավորել է տուժանքի ամբողջ գումարով:

ե) Ընկերությունը սույնով համաձայնում է, որ Վճարող Բանկը որևէ պատասխանատվություն չի կրում Պատվիրատուի կողմից ներկայացված վճարման պահանջի և Պահանջագրի իրավաչափության, վավերականության, ներկայացման ժամկետների և Պահանջագրի կատարումն ապահովելու համար Վճարող Բանկի կողմից իրականացվող գործողությունների համար:

1.4 Ընկերության կողմից գնման ընթացակարգի արդյունքում կնքված պայմանագիրը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում, եթե այն հանգեցնում է Պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծման, Պատվիրատուն սույն տուժանքի համաձայնագիրը և կից Պահանջագիրը բնօրինակներով ներկայացնում է Վճարող Բանկին՝ այդ մասին գրավոր տեղեկացնելով Ընկերությանը: Սույն տուժանքի համաձայնագիրը և կից Պահանջագիրը էլեկտրոնային թվային ստորագրությամբ հաստատված լինելու դեպքում դրանք Վճարող Բանկին են ներկայացվում էլեկտրոնային կրիչներով, ինչպես նաև դրանցից արտատպված թղթային տարբերակներով:

1.5Պատվիրատուն Վճարող բանկին կարող է ներկայացնել այլ լրացուցիչ փաստաթղթեր:

1.6Վճարող Բանկի կողմից Պահանջագրում նշված գումարի վճարման հետևանքով Ընկերության առաջացած ռիսկերի (Ընկերության կրած վնասների) և բացասական հետևանքների համար Բանկը որևէ պատասխանատվություն չի կրում: Բանկը պարտավոր չէ ստուգելու Ընկերության կողմից պայմանագրի պայմանները խախտելու փաստերը:

1.7 Այն դեպքում, երբ Ընկերության հաշվի միջոցները չեն բավարարում՝ Վճարող բանկը վճարման պահանջագիրը ստանալուց հետո՝ 2(երկու) աշխատանքային օրվա ընթացքում պետք է տեղեկացնի Պատվիրատուին՝ գրավոր ձևով:

1.8 Սույն համաձայնագիրը և կից Պահանջագիրը Բանկ ներկայացնելուց հետո, Բանկից անկախ պատճառներով, տասն աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուին գումարը չվճարվելու դեպքում, Պատվիրատուն չվճարման հետ

կապված Ընկերության մասին տեղեկությունները փոխանցում է <<ԱՔՌԱ Քրեդիթ Ռեփորթինգ>> ՓԲԸ (Վարկային բյուրո):

## 2. Այլ պայմաններ

2.1 Սույն համաձայնագիրը և Պահանջագիրը անհետկանչելի են, ուժի մեջ են մտնում Ընկերության կողմից վավերացման պահից և ուժի մեջ են մինչև Պատվիրատուի կողմից կնքված պայմանագրի կատարման արդյունքը ամբողջական ընդունվելու օրվան հաջորդող քսաներորդ աշխատանքային օրը ներառյալ:

2.2.Սույն համաձայնագիրը և կից Պահանջագիրը Պատվիրատուի կողմից Վճարող Բանկին ներկայացնելով՝

2.2.1. Պատվիրատուի կողմից հավաստվում է, որ Ընկերությունը թույլ է տվել պայմանագրային պարտավորությունների խախտում, իսկ

2.2.2. Ընկերության կողմից հավաստվում է, որ սույն տուժանքի համաձայնագիրը և կից Պահանջագիրը պատշաճ ստորագրված է Ընկերության իրավասու անձի կողմից:

2.3 Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

## 3. Ընկերության հասցեն, բանկային վավերապայմանները՝

**Կապալառու**

«ԼԻԼԱՆԱՐՄ» ՍՊԸ

Ք.Երևան, Նուբարաշեն 12փ. 4 շ.,բն 6

ԱԿԲԱ ԲԱՆԿ ԲԲԸ

Հ/Հ 220613330251000

ՀՎՀՀ 00433589

Հ.Օհանյան ________________________

(ստորագրություն)

| | |
|---|---|
| 1. | **ՎՃԱՐՄԱՆ ՊԱՀԱՆՋԱԳԻՐ*** |
| 2. Թիվ | |
| 3. | Ներկայացման ամսաթիվը` "___" ___ 20___ թ. |
| 4. «ԼԻԼԱՆԱՐՄ» ՍՊԸ | |
| 5. Վճարողին սպասարկող ֆինանսական կազմակերպություն (բանկ)` ԱԿԲԱ ԲԱՆԿ ԲԲԸ | |
| 6. Վճարողի հաշվի համարը` 220613330251000 | |
| 7. Վճարողի ՀՎՀՀ` 00433589 | |
| 8. Վճարողի ՀԾՀ` | |
| 9. Ծախառուի անվանումը, կամ անուն ազգանուն `Երևանի քաղաքապետարան | |
| 10. Ծախառուի ՀԾՀ (չի լրացվում) | |
| 11. Ծախառուի ՀՎՀՀ` 02593108 | |
| 12. Ծախառուին սպասարկող ֆինանսական կազմակերպություն (բանկ)` Կենտրոնական գանձապետարան | |
| 13. Ծախառուի հաշվի համարը (հշ.N) 900015211429 | |
| 14. Գումարը (թվերով և բառերով)` 2205750 /երկու միլիոն երկու հարյուր հինգ հազար յոթ հարյուր հիսուն/ | |
| 15. Ակցեպտավորված գումարը` (թվերով և բառերով) (Նախատեսված է նշված գումարի մասնակի ակցեպտի համար, որը չի կիրառվում) | |
| 16. Արժույթը (բառերով և կոդով)` ՀՀ դրամ AMD | |
| 17. Գործարքի (վճարման) նպատակը` *(որակավորման ապահովման համար)* | |
| 18. Վճարման կատարման հիմքերը` (Փաստաթղթերի անվանումը, այդ թվում` տուժանքի մասին համաձայնագիրը, դրանց համարները, պայմանագրի ծածկագիրը որի հիման վրա կատարվում է գանձումը)` ԵՔ-ԲՄԱԾՁԲ-22/31 | |
| 19. Վճարման պայմանները` | <ակցեպտավորված վճարում> |
| 20. Առդիր էջերի քանակը` --- էջ | |

| | |
|---|---|
| 22.ա. Ծախառուի ստորագրությունները<br><br>/____________________/<br><br>/____________________/<br><br>22.բ.<br>Կ.Տ. | 21.ա. Վճարողի ստորագրությունները`<br><br>Հ. Օհանյան /____________________/<br><br>/____________________/<br><br>21.բ.<br>Կ.Տ. |
| 24.ա. Ծախառուին սպասարկող ֆինանսական կազմակերպություն<br><br>/____________________/<br>/ստորագրություն/<br><br>24.բ. Կ.Տ.<br><br>24.գ "___" ___ 20___ թ. | 23.ա. Վճարողին սպասարկող ֆինանսական կազմակերպություն<br><br>/____________________/<br>/ստորագրություն/<br><br>23.բ. Կ.Տ.<br><br>23.գ. Կատարման ամսաթիվը` "___" ___ 20___ թ. |

*

## ՏՈՒԺԱՆՔԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ
**(պայմանագրի ապահովում)**

ք.Երևան

«24» մարտի 2022թ.

«Լիլանարմ» ՍՊԸ-ն , ի դեմս Ընկերության տնօրեն Տնօրեն. Հ Օհանյանի-, անձնագիր AU0588103, տրված 19.01.2022թ. 067 կողմից , որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա՝ (այսուհետև՝ Ընկերություն), սույնով միակողմանի սահմանում է հետևյալ տուժանքի վճարման համաձայնությունը.

### 1. Համաձայնության առարկան

1.1 Ընկերությունը մասնակցում է Երևանի քաղաքապետարանի* (այսուհետ՝ Պատվիրատու )կողմից կազմակերպված՝ ԵՔ-ԲՄԱԾՁԲ-22/31* ծածկագրով գնման ընթացակարգին:

1.2 Որպես գնման ընթացակարգի արդյունքում կնքվել իք պայմանագրի կատարման ապահովում, Ընկերությունը Պատվիրատուին է ներկայացնում սույն տուժանքի համաձայնագիրը և կից վճարման պահանջագիրը՝ լրացված և հաստատված Ընկերության կողմից:

1.3 Ընկերությունը սույն տուժանքի համաձայնագրին կից ներկայացվող վճարման պահանջագրի (այսուհետ՝ Պահանջագիր )ստորագրմամբ անհետկանչել իորեն համաձայնվում է, որ

ա) Պահանջագրի ստորագրմամբ Ընկերությունը տալիս է իր հավաստումը Պահանջագրի «Վճարման պայմանները» դաշտում լրացված «ակցեպտավորված վճարման» համար, որի դեպքում նշված գումարի գանձման հետ կապված Ընկերությանը սպասարկող /վճարող/ Բանկը՝ /այսուհետ՝ Վճարող Բանկ/ ստացված Պահանջագիրը չի ներկայացնում Ընկերությանը լրացուցիչ համաձայնություն ստանալու համար, քանի որ Ընկերության կողմից Պահանջագրի վրա արդեն դրվել է ստորագրությունը՝ ակցեպտավորման նպատակով:

բ) Պահանջագիրը հիմք է հանդիսանում Վճարող Բանկի համար՝ Պահանջագրով նշված ամբողջ գումարը Ընկերության հաշվից գանձելու համար՝ առանց լրացուցիչ ակցեպտավորման:

գ) Ընկերությունը չի կարող գրավոր կամ այլ եղանակով Վճարող Բանկին կարգադրել Պահանջագրի վրա դրված իր ակցեպտը հետկանչելու մասին:

դ) Ընկերությունը հավաստում է, որ Պահանջագիրը ակցեպտավորել է տուժանքի ամբողջ գումարով:

ե) Ընկերությունը սույնով համաձայնում է, որ Վճարող Բանկը որևէ պատասխանատվություն չի կրում Պատվիրատուի կողմից ներկայացված վճարման պահանջի և Պահանջագրի իրավաչափության, վավերականության, ներկայացման ժամկետների և Պահանջագրի կատարումն ապահովելու համար Վճարող Բանկի կողմից իրականացվող գործողությունների համար:

1.6 Ընկերության կողմից գնման ընթացակարգի արդյունքում կնքված պայմանագիրը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում Պատվիրատուն սույն տուժանքի համաձայնագիրը և կից Պահանջագիրը բնօրինակներով ներկայացնում է Վճարող Բանկին՝ այդ մասին գրավոր տեղեկացնելով Ընկերությանը: Սույն տուժանքի համաձայնագիրը և կից Պահանջագիրը էլեկտրոնային թվային ստորագրությամբ հաստատված լինելու դեպքում դրանք Վճարող Բանկին են ներկայացվում էլեկտրոնային կրիչներով, ինչպես նաև դրանցից արտատպված թղթային տարբերակներով:

1.7 Պատվիրատուն Վճարող բանկին կարող է ներկայացնել այլ լրացուցիչ փաստաթղթեր:

1.8Վճարող Բանկի կողմից Պահանջագրում նշված գումարի վճարման հետևանքով Ընկերության առաջացած ռիսկերի (Ընկերության կրած վնասների) և բացասական հետևանքների համար Բանկը որևէ պատասխանատվություն չի կրում: Բանկը պարտավոր չէ ստուգելու Ընկերության կողմից պայմանագրի պայմանները խախտելու փաստերը:

1.9Այն դեպքում, երբ Ընկերության հաշվի միջոցները չեն բավարարում՝ Վճարող բանկը վճարման պահանջագիրը ստանալուց հետո՝ 2 (երկու ) աշխատանքային օրվա ընթացքում պետք է տեղեկացնի Պատվիրատուին՝ գրավոր ձևով:

1.10 Սույն համաձայնագիրը և կից Պահանջագիրը Բանկ ներկայացնելուց հետո, Բանկից անկախ պատճառներով, տասն աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուին գումարը չվճարվելու դեպքում, Պատվիրատուն չվճարման հետ կապված Ընկերության մասին տեղեկությունները փոխանցում է <<ԱՔՌԱ Քրեդիթ Ռեփորթինգ>> ՓԲԸ (Վարկային բյուրո):

### 2. Այլ պայմաններ

2.1 Սույն համաձայնագիրը և Պահանջագիրը անհետկանչելի են, ուժի մեջ են մտնում Ընկերության կողմից վավերացման պահից և ուժի մեջ են մինչև Ընկերության կողմից կնքվելիք պայմանագրով ստանձնվող պարտավորությունների ամբողջական կատարման վերջին օրվան հաջորդող քսաներորդ աշխատանքային օրը ներառյալ:

2.2.Սույն համաձայնագիրը և կից Պահանջագիրը Պատվիրատուի կողմից Վճարող Բանկին ներկայացնելով՝

2.2.1. Պատվիրատուի կողմից հավաստվում է, որ Ընկերությունը թույլ է տվել պայմանագրային պարտավորությունների խախտում, իսկ

2.2.2. Ընկերության կողմից հավաստվում է, որ սույն տուժանքի համաձայնագիրը և կից Պահանջագիրը պատշաճ ստորագրված է Ընկերության իրավասու անձի կողմից:

2.3 Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

**3. Ընկերության հասցեն, բանկային վավերապայմանները՝**

**Կապալառու**
«ԼԻԼԱՆԱՐՄ» ՍՊԸ
Ք.Երևան, Նուբարաշեն 12փ. 4շ., բն 6
ԱԿԲԱ ԲԱՆԿ ԲԲԸ
Հ/Հ 220613330251000
ՀՎՀՀ 00433589

Հ.Օհանյան ------------------------------
(ստորագրություն)

| | |
|---|---|
| 1. | **ՎՃԱՐՄԱՆ ՊԱՀԱՆՋԱԳԻՐ*** |
| 2. Թիվ | |
| 3. | Ներկայացման ամսաթիվը՝ "___" ___ 20___ թ. |
| 4. «ԼԻԼԱՆԱՐՄ» ՍՊԸ | |
| 5. Վճարողին սպասարկող ֆինանսական կազմակերպություն (բանկ)՝ ԱԿԲԱ ԲԱՆԿ ԲԲԸ | |
| 6. Վճարողի հաշվի համարը՝ 220613330251000 | |
| 7. Վճարողի ՀՎՀՀ՝ 00433589 | |
| 8. Վճարողի ՀԾՀ՝ | |
| 9. Շահառուի անվանումը, կամ անունը ազգանունը՝ Երևանի քաղաքապետարան | |
| 10. Շահառուի ՀԾՀ (չի լրացվում) | |
| 11. Շահառուի ՀՎՀՀ՝ 02593108 | |
| 12. Շահառուին սպասարկող ֆինանսական կազմակերպություն (բանկ)՝ Կենտրոնական գանձապետարան | |
| 13. Շահառուի հաշվի համարը (հշ.N) 900015211429 | |
| 14. Գումարը (թվերով և բառերով)՝ 1470500/մեկ միլիոն չորս հարյուր յոթանասուն հազար հինգ հարյուր/ | |
| 15. Ակցեպտավորված գումարը՝ (թվերով և բառերով) (նախատեսված է նշված գումարի մասնակի ակցեպտի համար, որը չի կիրառվում) | |
| 16. Արժույթը (բառերով և կոդով)՝ ՀՀ դրամ AMD | |
| 17. Գործարքի (վճարման) նպատակը՝ *(պայմանագրի կատարման ապահովման համար)* | |
| 18. Վճարման կատարման հիմքերը՝ (Փաստաթղթերի անվանումը, այդ թվում՝ տուժանքի մասին համաձայնագիրը, դրանց համարները, պայմանագրի ծածկագիրը, որի հիման վրա կատարվում է գանձումը)՝ ԵՔ-ԲՄԱԾՁԲ-22/31 | |
| 19. Վճարման պայմանները՝ | <ակցեպտավորված վճարում> |
| 20. Առդիր էջերի քանակը՝ --- էջ | |

| | |
|---|---|
| 22.ա. Շահառուի ստորագրությունները<br>/____________________/<br>/____________________/<br>22.բ.<br>Կ.Տ. | 21.ա. Վճարողի ստորագրությունները՝<br>Հ. Օհանյան /____________________/<br>/____________________/<br>21.բ. Կ.Տ. |
| 24.ա. Շահառուին սպասարկող ֆինանսական կազմակերպություն<br>/____________________/<br>/ստորագրություն/<br>24.բ. Կ.Տ.<br>24.գ "___" ___ 20___ թ. | 23.ա. Վճարողին սպասարկող ֆինանսական կազմակերպություն<br>/____________________/<br>/ստորագրություն/<br>23.բ. Կ.Տ.<br>23.գ. Կատարման ամսաթիվը՝ "___" ___ 20___ թ. |

«ԼԻԼԱՆԱՐՄ» «ЛИЛАНАРМ» «LILANARM» 00433589